

Արձանագրություն N 157

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 2016թ-ի նոյեմբերի 30 -ի նիստի

Օրակարգ

1. Ասպիրանտների ատեստացիաների հարցը/ զեկ.՝ Խ. Գալստյան/:
2. Դոկտորական ատենախոսության թեմայի հաստատում / զեկ.՝ Խ. Գալստյան/:
3. Ֆակուլտետից գործուղման մեկնած դասախոսների հաշվետվությունը/ զեկ.՝ Վ. Ազյան, Վ. Պետրոսյան/:
4. Ընթացիկ հարցեր:

Խորհուրդը որոշեց.

1. Ատեստավորել և երաշխավորել հեռակա ուսուցման հաջորդ տարի տեղափոխվելու համար հետևյալ ասպիրանտներին.
ա/ Քաղաքական գործընթացների և ինստիտուտների ամբիոնից՝ 2-րդ տարվա ասպիրանտ Հասմիկ Ղազարյանին, 2-րդ տարվա ասպիրանտ Ալվարդ Սարգսյանին, 1-ին տարվա ասպիրանտ Սիրանուշ Մելիքյանին:
բ/ Հանրային կառավարման ամբիոնից՝ 3-րդ տարվա ասպիրանտ Տաթև Զորյանին, 1-ին տարվա ասպիրանտ Արփիկե Ասատրյանին:
գ/ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնից՝ 3-րդ կուրսի ասպիրանտ Նարինե Մեհրաբյանին, 3-րդ տարվա ասպիրանտ Զվարթ Հովսեփյանին, 2-րդ տարվա ասպիրանտ Ժաննա Հարությունյանին, 1-ին տարվա ասպիրանտ Էդգար Էլբակյանին,
դ/ Քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնից՝ 2-րդ տարվա ասպիրանտ Արեն Առաքելյանին, 2-րդ տարվա ասպիրանտ Տաթևիկ Մանասյանին, 2-րդ տարվա ասպիրանտ Նարեկ Գրիգորյանին, 2-րդ տարվա ասպիրանտ Նարեկ Տիրատուրյանին, 3-րդ տարվա ասպիրանտ Նարեկ ՄԻնասյանին, 3-րդ տարվա ասպիրանտ Կնյազ Սարոյանին, 3-րդ տարվա ասպիրանտ Լուսինե Խոջայանին, 2-րդ տարվա հայցորդ Արման Սարգսյանին:
2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԵՊՀ Քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի հեռակա ուսուցման 1ին տարվա ասպիրանտ Արամ Գրիգորյանը ուսումնական տարվա ընթացքում բացակայել է հանրապետությունից, չունի ատենախոսության հաստատված թեմա, չի մասնակցել կրեդիտային համակարգով նախատեսված ասպիրանտական դասընթացներին և ներկա չի գտնվել ամբիոնի ատեստացիոն նիստին՝ **չատեստավորել** հեռակա ուսուցման ասպիրանտ Արամ Գրիգորյանին:
3. ԵՊՀ Քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի դոցենտ, քաղ. գիտ. թեկնածու Աշոտ Ալեքսանյանի դոկտորական ատենախոսության թեմա վերաձևակերպել «Քաղաքացիավարական ժողովրդաիշխանության կայացումը հետխորհրդային երկրներում», ԻԳ.00.01 «Քաղաքական գիտության պատմություն և տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար:

**ԵՊՀ Միջազգային հարաբերությունների
ֆակուլտետի դեկան, Գիտական խորհրդի
նախագահ, պրոֆ.**

Գ. Պետրոսյան

**ԵՊՀ Միջազգային հարաբերությունների
Ֆակուլտետի Գիտական խորհրդի քարտուղար, դոց.**

Խ. Գալստյան

